Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի բանկերի միության և «Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպության միջև եռակողմ հուշագիր՝ ուղղված 100 հա նոր անտառ հիմնելուն

28.11.2025

Այսօր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղի ունեցավ ՀՀ կենտրոնական բանկի, Հայաստանի բանկերի միության և «Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպության միջև եռակողմ հուշագրի ստորագրումը։ Հուշագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և բոլոր առևտրային բանկերի ֆինանսավորմամբ երեք տարում կհիմնվի 100 հա նոր անտառ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի հողերում։ Ընդհանուր թվով տնկվելու է 300,000 (երեք հարյուր հազար) տեղական անտառային տեսակի ծառեր։

Անտառհիմնումն իրականացնելու է «Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպությունը համայնքային հողերում՝ նպատակ ունենալով ստեղծել կայուն, կենսաբազմազանությամբ հարուստ անտառներ։ Համայնքային հողի օգտագործման ժամկետի ավարտին այդ հողերը և դրանց վրա ձևավորված անտառային էկոհամակարգը վերադառնալու են համայնքին, և անտառը դառնալու է համայնքի սեփականությունը։ «Իմ անտառ Հայաստան»-ն իրականացնելու է տնկված ծառերի հետագա խնամքը, դրանց պահպանությունը և անհրաժեշտության դեպքում չորացած ծառերի փոխարինումը նորերով։

«Այս նախաձեռնությունը պարզապես ծառատունկ չէ. այն արձագանք է մեր առջև ծառացած օրհասական բնապահպանական մարտահրավերներին։ Օդի աղտոտվածությունը, անտառային հրդեհների աճող ռիսկը, հողերի էրոզիան և անապատացման վտանգները այսօր դարձել են մեր երկրի, մեր տնտեսության և մեր համայնքների ամենօրյա մտահոգությունները։ Այս իրողությունները պահանջում են համակարգված և պատասխանատու քայլեր։ Համոզված եմ՝ այս աշխատանքը շարունակական է լինելու, և մեր համատեղ ջանքերը կերտելու են այն Հայաստանը, որը պարտավոր ենք թողնել հետագա սերունդներին։», - ասաց ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը։

«Հավատարիմ մնալով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթին (ԿՍՊ)՝ հայաստանյան բանկային համակարգը շարունակում է իր ներդրումն ունենալ ծրագրերում, որոնք ապահովում են երկարաժամկետ ազդեցություն և ստեղծում կայուն արժեք: ՀԲՄ 30-ամյակի հոբելյանական տարում նոր անտառի հիմնման վերաբերյալ հուշագրի ստորագրումը դարձավ տարվա ամենահիշարժան նախաձեռնություններից մեկը՝ հերթական անգամ միավորելով ԿԲ-ին և բոլոր առևտրային բանկերին: Ավելի քան 250 մլն դրամ արժողությամբ մեր համատեղ ծրագիրը վերահաստատում է նաև մեր պատրաստակամությունը շարունակական քայլերով աջակցել երկրի ավելի կանաչ ու կայուն ապագայի ձևավորմանը», - ընդգծել է Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը:

«Այս գործընկերությունը մեզ համար հատկապես արժեքավոր է: Բանկերը, համատեղ գործելով, մասնակցում են ռազմավարական նշանակություն ունեցող նախագծի իրականացմանը: Այս նախագծով նրանք ունեն մեծ ու փոքր տնտեսական դերակատարների մտածելակերպի վրա ազդելու ուժ: Նոր անտառների հիմնումը երկարաժամկետ ներդրում է, որը կարևոր է մեր երկրի կայուն տնտեսական զարգացման համար»:», - ասաց «Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպության հիմնադիր և տնօրեն Անտրէ Գումուշճեանը:

Այս համագործակցությունը 2023 թվականի ՀՀ դրամի 30-ամյակի առթիվ իրականացված նախագծի շարունակությունն է, երբ Հայաստանի բոլոր բանկերը և Կենտրոնական բանկը միասին տնկեցին 50 հեկտար անտառ Լոռու մարզի Ուրասար և Ջրաշեն բնակավայրերի մոտ:

Նոր անտառների հիմնումը նպաստում է օդի աղտոտվածության նվազեցմանը, ջրային պաշարների պահպանմանը, հողի էրոզիայի և անապատացման դեմ պայքարին և համայնքներում կայուն, կանաչ զարգացման հնարավորություններ ստեղծելուն: